ՏՐԱՆՍ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունվար Փետրվար Մարտ 2023



Հ-24

ԲԵԼԳԻԱՅՈՒՄ ՄԱՀԱՑԵԼ Է ՎՐԱՅԻ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿԻՆ----------2
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԽՈՑԵԼԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎՐԱ----------3
Կ.Ա.-Ն ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻՆ ՏՐՎԵԼ Է
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՄԱՐ----------4
ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԿԱՆԱՆՑ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ՄԱՄՆԱԿՑԵԼ ԵՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ՀԿ-Ն ԵՎ ԿԱՆԱՆՑ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------5
ԳՈՂԱՑԵԼ ԷԻՆ ՏՐԱՆՍ ԱՆՁԻ ԲՋՋԱՅԻՆ ----------6
ԻԿՀԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՓԵՏՐՎԱՐԻ 20-ԻՑ ՄԱՐՏԻ 10-Ը ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԱՅՑՈՎ ԳՏՆՎՈՒՄ ԷԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ
ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ----------7
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ՊԱՏԻՎ ՈՒՆԵՐ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ «ԳԱԼԱՄ ԼԳԲՏՔ+»
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՆԵԼԱՅԻՆ
ՁՐՈՒՅՑԻՆ----------8
ՏԱՍԻՑ ԱՎԵԼԻ ԴԻՄԱԿԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ ՄԱՀԱԿՆԵՐԸ ՁԵՌՔՆԵՐԻՆ
ՀԱՐՁԱԿՎԵԼ ԵՆ ՏՐԱՆՍ ԿՆՈՋ ՎՐԱ----------9
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՑ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԵՆՔ ՍՏԱՑԵԼ----------10
ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԿՈՉԸ՝ ԱՅՍ ԱՆԳԱՄ TIKTOK-ՈՒՄ----------11
ԵՐԵՎԱՆՈՒՄ ԴԻՄԱԿԱՎՈՐՎԱԾ ՏՂԱՄԱՐԴԻԿ ՀԱՐՁԱԿՎԵԼ ԵՆ ԿԱՆԱՆՑ ՎՐԱ
(EPRESS.AM)----------12
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է
2023Թ.-Ի ԶԵԿՈՒՅՑԸ՝ ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ի
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ----------13



ԲԵԼԳԻԱՅՈՒՄ ՄԱՀԱՑԵԼ Է ՎՐԱՑԻ ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ ԿԻՆ

Բելգիայում մահացել է վրացի տրանսգենդեր կինը Լիզա Կիստաուրին.
Ցավակցում ենք Լիզայի ընտանիքին, ընկերներին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԽՈՑԵԼԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎՐԱ

ԱՅՍ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՆՊԱՏԱԿՆ Է ԿԱԶՄԵԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱ ՄԱՆՐԱՄԱՍՆ ԸՆԹԱՑԻԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԲԽՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՇՈՒՐՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ՝ ԼԳԲՏԻՔ, ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂԻ ԵՎ ՄԻԱՎ-Ի ԿՅԱՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱԶԴՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ.

ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ,ՀԱՅԱՍՏԱՆ

Կ.Ա.-Ն ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻՆ ՏՐՎԵԼ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՄԱՐ

Կ.Ա.-ն 30.10.2018թ.-ին ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժին ներկայացրել էր դիմում ծննդյան ակտում ուղղումներ կատարելու վերաբերյալ:

Կ. Ա.-ն ներկայացված դիմումով խնդրել էր ուղղում կատարել ծննդյան թիվ 870 ակտում, այն է՝ սեռի վերաբերյալ սյունակում իգական նշումը փոխել արական նշումով:

ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի կողմից 17.12.2018թ. կազմված եզրակացությամբ դիմումը մերժվել էր:

Կ.Ա.-ն դիմել էր ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել ՀՀ ԱՆ ՔԿԱԳ Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի կողմից ընդունված վարչական ակտը և պարտավորեցնել ընդունել բարենպաստ վարչական ակտ:

ՀՀ վարչական դատարանի կողմից Կ.Ա.-ի հայցը մերժվել էր, որից հետո Կ.Ա.-ն դիմել էր ՀՀ վերաքննիչ վարչական դատարան, այնուհետև ՀՀ վճռաբեկ դատարան, որոնք ևս մերժել էին Կ.Ա.-ի բողոքները:

Այսպիսով, սպառելով ներպետական բոլոր դատական ատյանները, Կ.Ա.-ի իրավունքները վերականգնելու համար «Իրավունքը կողմ» ԻՀԿ-ն 2022 թվականի օգոստոսի 12-ին դիմել էր Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

23.01.2023թ.-ին «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն Մարդու իրավունքների եվրոպական դատարանից ստացել է ծանուցում, ըստ որի Կ.Ա.-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության դիմումին տրվել է համապատասխան համար:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն և ԿԱՆԱՆՑ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավունքի Կողմ ՀԿ-ն մասնակցել է Մեծ Բրիտանիայի դեսպանի և կանանց կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպմանը՝ Կանանց Միջազգային օրվան ընդառաջ՝ ներկայացնելու մեր աշխատանքը Մեծ Բրիտանիայի կառավարության Հակամարտությունների, Կայունության և Անվտանգության հիմնադրամի շրջանակներում, որը իրականացվում էր Միացյալ Թագավորության կառավարության՝ Պատերազմի և Խաղաղության Լուսաբանման Ինստիտուտ (IWPR) կողմից: Այս ծրագրի շրջանակներում մեր ստացած աջակցության շնորհիվ Իրավունքի Կողմ ՀԿ-ն նպաստել է տրանս և ԼԳԲՔԻ համայնքների անդամների իրազեկվածության բարձրացմանը Կանայք, Խաղաղություն և Անվտանգություն օրակարգի վերաբերյալ՝ ի հավելումն ԼԳԲՏՔԻ հիմնախնդիրները WPS-ի օրակարգում ներառելուն:

Կանանց Միջազգային օրվան շրջանակում Մեծ Բրիտանիայի դեսպան Ջոն Գալահերը կազմակերպել է ընդունելություն #UKCSSF-ի կողմից աջակցություն ստացող կազմակերպությունների կին ներկայացուցիչների համար՝ որպես Հայաստանում Կանայք, Խաղաղություն և Անվտանգություն #WPS օրակարգը խթանող ծրագրի մի մաս:

«Կանանց ակտիվ ներգրավվածությունը կյանքի բոլոր ոլորտներում առանցքային է Միացյալ Թագավորության կառավարության մոտեցման համար և համահունչ է կանանց և աղջիկների վերաբերյալ Մեծ Բրիտանիայի նոր ռազմավարությանը», - նշել է դեսպանը: «Այդ իսկ պատճառով ես ուրախ եմ, որ Մեծ Բրիտանիան աջակցում է այս նախագծին, որի նպատակն է ուժեղացնել քաղաքացիական հասարակության դերակատարներին՝ խթանելու կանանց մասնակցությունը խաղաղության և անվտանգության նախաձեռնություններին», - ավելացրել է նա:

ԳՈՂԱՑԵԼ ԷԻՆ ՏՐԱՆՍ ԱՆՁԻ ԲՋՋԱՑԻՆ

Կազմակերպություն դիմած տրանս անձ Ա.Ե.-ն հայտնել էր, որ իր հաճախորդը, գտնվելով իր տանը, 2023 թվականի հունվարի 28-ին իր տան
հյուրասենյակի սեղանի վրայից գաղտնի հափշտակել էր իր հեռախոսը՝ պատճառելով 800.000 ՀՀ դրամի գույքային վնաս:
Ա.Ե.-ի հաղորդման հիման վրա նախաձեռնվել էր քրեական վարույթ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 4-րդ մասով:
Այնուհետև կազմակերպության փաստաբանը տրամադրեց խորհրդատվություն տրանս անձ Ա.Ե.-ին, ինչպես նաև կապ հաստատեց քրեական վարույթով նախաքննություն իրականացնող քննիչի հետ:
Կազմակերպության փաստաբանների աշխատանքի արդյունքում քննիչի կողմից որոշում կայացվեց Ա.Ե .-ին վերադարձնել իր մոտ գտնվող իրեղեն ապացույց հեռախոսը, որով բավարարվեց տրանս անձ Ա.Ե.-ի պահանջը՝ իր մոտից գողացված բջջային հեռախոսը վերադարձվեց տիրոջը:

ԻԿՀԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՓԵՏՐՎԱՐԻ 20-ԻՑ ՄԱՐՏԻ 10-Ը ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ԳՏՆՎՈՒՄ ԷԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան Հասարակական կազմակերպության աշխատակիցները փետրվարի 20-ից մարտի 10-ը աշխատանքային այցով գտնվում էին Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Աշխատակիցները հանդիպումներ ունեցան գործընկեր կազմակերպությունների (National Endowment for Democracy, Urgent Action Fund | For Women's Human Rights, Human Rights Campaign, Global Fund for Women, Freedom House, Astraea Lesbian Foundation For Justice, National Democratic Institute, GALAS LGBTQ+ Armenian Society) ներկայացուցիչների հետ, ովքեր տարիներ շարունակ աջակցում են մարդու իրավունքների և ժողովրդավարության կառուցման աշխատանքներին ՀՀ-ում:

Հանդիպումների ընթացքում քննարկվեցին ինչպես ՀՀ-ում ԼԳԲՏԻՔ անձանց խնդիրների, դրանց լուծման ուղիների, այնպես էլ արդյունավետ համագործակցության ուղիների մասին:

Հանդիպումներին զուգահեռ մարտի հինգին Լոս Անջելես շրջանի Գլենդել քաղաքում Լիլիթ Մարտիրոսյանը հանդիպում ունեցավ հայ ամերիկաբնակ ԼԳԲՏԻՔ անձանց և համակիրների հետ, որը հնարավոր դարձավ իրականացնել ԳԱԼԱՍ-ի հետ համագործակցությամբ և օգնությամբ:

Հանդիպման ընթացքում խոսեցինք Հայաստանում ԼԳԲՏԻՔ անձանց իրավիճակից, խտրականության և մարդու իրավունքների ոտնահարման դեպքերից, մեր հաղթանակներից և ապագա քայլերից, քննարկեցինք, թե ինչպես կարող են ԱՄՆ-ում բնակվող աջակիցներն աջակցել Հայաստանում ապրող ԼԳԲՏԻՔ անձանց:

Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ն կարևորում է նմանատիպ հանդիպումները գործընկեր կազմակերպությունների և աջակիցների հետ, որը նպաստում է ԼԳԲՏԻՔ անձանց կյանքի որակի բարելավմանը և իրավունքների պաշտպանվածությանը ՀՀ-ում:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ՊԱՏԻՎ ՈՒՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ «ԳԱԼԱՍ ԼԳԲՏՔ+» ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՆԵԼԱՅԻՆ ԶՐՈՒՅՑԻՆ

Մեզ՝ Իրավունքի Կողմ իրավապաշտպան ՀԿ-ի թիմի անդամների համար պատիվ և արտոնություն էր հրավիրված լինել մասնակցելու մեր գործընկեր ԳԱԼԱՍ ԼԳԲՏՔ+ հայկական համայնքի կողմից կազմակերպված պանելային զրույցին: Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել ԳԱԼԱՍ-ի թիմին արդյունավետ հանդիպման և համագործակցության համար, և բոլոր պատվավոր հյուրերին և մասնակիցներին՝ ԱՄՆ-ում և նրա սահմաններից դուրս ԼԳԲՏՔ+ արդարադատությանը խթանելու ջանքերի համար:

Հանդիպումը մեզ կատարյալ հնարավորություն ընձեռեց մեր մարտահրավերներին դիմակայելու և դրանց բարդ պատճառները ուսումնասիրելու համար, որոնք խոչընդոտում են մարդու համընդհանուր իրավունքների և ազատությունների լիարժեք հասանելիությանը, ինչպես նաև գնահատելու մեր ձեռքբերումները և հաջողությունները:

Այս հանդիպման միջոցով մենք վերահաստատել ենք միասին աշխատելու մեր կայուն հանձնառությունը ոչ միայն մեր երկրներում, այլ նաև դրանց սահմաններից դուրս՝ արդյունավետորեն լուծելու շարունակական մարտահրավերները, որպեսզի դիտարկենք մեզանից յուրաքանչյուրի համար հավասար ապագա կառուցելու նոր ուղիներ և ռազմավարություններ:

GALAS LGBTQ+ ARMENIAN SOCIETY

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՏԱՍԻՑ ԱՎԵԼԻ ԴԻՄԱԿԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ ՄԱՀԱԿՆԵՐԸ ՁԵՌՔՆԵՐԻՆ ՀԱՐՁԱԿՎԵԼ ԵՆ ՏՐԱՆՍ ԿՆՈՋ ՎՐԱ

Սույն թվականի մարտի 13-ի լույս 14-ի գիշերը Ամիրյան-Զաքյան փողոցների խաչմերուկում տասից ավելի դիմակավորված անձինք մահակները ձեռքներին հարձակվել են տրանս կնոջ վրա՝ ենթարկելով դաժանաբար ծեծի՝ վերջինիս գցելով գետնին և հարվածելով նրա մարմնի տարբեր մասերին:
Տրանս կինը հասցրել է դիմել փախուստի՝ թաքնվելով շենքերից մեկի շքամուտքում, այնուհետև, նկատելով տարածքում ծառայություն իրականացնող պարեկներին, մոտեցել է նրանց՝ օգնություն խնդրելու նպատակով, սակայն մինչ պարեկների մոտենալը դեպքի վայր, բռնարարները հասցրել են դիմել փախուստի:
Տրանս կինը դեպքի առնչությամբ դիմել է ոստիկանություն:
Տրանս կնոջ հետ զրույցի ընթացքում տեղեկացել ենք, որ հասցրել է տեսնել երիտասարդներից մի քանիսի դեմքերը ու հաղորդման մեջ նշել է այդ մասին:

Տրանս կինը անցել է դատաբժշկական փորձաքննություն:
Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ն դատապարտում է գենդերային հիմքով բռնությունը և հետամուտ է լինելու դեպքի ամբողջական բացահայտմանը և մեղավորներին պատասխանատվության ենթարկելուն:
Իրավունքի կողմ ՀԿ-ն ՀՀ ոստիկանությանը հորդորում է հետաքննություն անցկացնել բռնարարներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:
Կազմակերպության իրավաբանական բաժինը ներգրավված է սույն գործի շրջանակներում և անելու է անհնարինը, որպեսզի մեղավորները ենթարկվեն պատասխանատվության:Նշենք, որ նույն օրը՝ սույն դեպքից կես ժամ անց, վերոնշյալ երիտասարդները Երևանի քաղաքապետարանի տարածքում դաժան ծեծի են ենթարկել մեկ այլ տրանս կնոջ՝ պատճառելով տարբեր աստիճանի վնասվածքներ ու կրկին դիմել փախուստի:
Տրանս կինը դիմել է տարածքում ծառայություն իրականացնող ոստիկաններին ու շտապ բժշկական կանչ է գրանցել:
Իսկ մինչև բռնություն իրականացնելը սույն երիտասարդները Մաշտոցի պողոտայում թիրախավորել են երկու այլ տրանս կանանց, սակայն տրանս անձինք հասցրել են դիմել փախուստի:

Ցանկանում ենք ընդգծել, որ վերջին ժամանակներում տրանս ԼԳԲԻՔ անձանց ծեծի ենթարկելու մի շարք դեպքեր են գրանցվել և, մեր կարծիքով, այն կրում է ուղղորդված, միգուցե նաև կազմակերպված բնույթ:

Սույն դեպքերի առնչությամբ կազմակերպությունը դիմումներ է նախապատրաստում՝ ուղարկելու.

ՀՀ ոստիկանությանը
ՀՀ դատախազությանը
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին
ՀՀ քննչական կոմիտեին
ՀՀ այլ պատկան մարմիններին
և այլ մարմիններ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՑ ԾԱՆՈՒՑՈՒՄ ԵՆՔ ՍՏԱՑԵԼ

2019թ. ապրիլի 5-ին ՀՀ Ազգային ժողովում «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկում» թեմայով խորհրդարանական լսումներում «Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանի ելույթից հետո նրա դեմ հնչել են վիրավորանքներ և ատելության խոսք, համաձայն որոնց տրանսգենդեր անձը իրավունք չունի ելույթ ունենալ ՀՀ Ազգային ժողովում: Այդ հայտարարությունները ուղեկցվել են խոշտանգման և սպանության սպառնալիքներով, ավելին, սոց ցանցերում և ԶԼՄ-ներում պարզվել և հրապարակվել էին Լիլիթ Մարտիրոսյանի անձնական տվյալները և տան հասցեն, ինչին էլ իր հերթին նպաստել է նրա ու ԻԿՀԿ այլ աշխատակիցների նկատմամաբ հետապնդումներին և բազմաթիվ այլ հանցավոր գործունեություններին՝ ատելության և խտրականության հիմքով:

Ինչպես արդեն նշել էինք, այդ սպառնալիքներին ի պատասխան, 2019թ.-ի հոկտեմբերին Լիլիթ Մարտիրոսյանը պատիվը և արժանապատվությունը վիրավորելու հիմքով դիմել է դատարան հրապարակային ներողության և 1 մլն. ՀՀ դրամի չափով գումարի փոխհատուցման պահանջով: Սակայն, ՀՀ իրավապահ մարմինները հրաժարվել էին հարուցել քրեական գործ, իսկ դատական մարմինները մերժել էին բոլոր բողոքները, որից հետո բողոք էր ներկայացվել Մարդու իրավունքների եվրոպական դատարան:



ԲՈՆՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԿՈՉԸ՝ ԱՅՍ ԱՆԳԱՄ TIKTOK-ՈՒՄ

Սույն թվականի մարտի 26-ին «Խաչիկ Իրինա Գրիգորյաններ» անունով գրանցված օգտատերը TikTok սոցիալական հարթակի ուղիղ հեռարձակման ընթացքում հայհոյախառն արտահայտություններ և բռնության կոչեր է հնչեցրել տրանս անձանց նկատմամբ: Մասնավորապես, սույն անձը առաջարկել է փոխանակվել հեռախոսահամարներով, խմբեր կազմել և մտնել օրական մի քանի տրանս անձանց բնակարաններ և բռնություն գործադրել/սպանել նրանց՝ անվանելով այդ գործողությունները «շաբաթօրյակ»: Տեսանյութի մեկնաբանություններում տարբեր անձինք նույնպես հնչեցրել են բռնության սպառնալիքներ և տրամադրել են իրենց հեռախոսահամարը:
Նույն օրը, 10-ից ավելի տրանս անձինք, սպառնալիքների ազդեցությամբ վտանգ զգալով, դեպքի առնչությամբ դիմում են ներկայացվել ՀՀ Կենտրոնական ոստիկանություն: Ոստիկանությունը գործով նյութեր է նախապատրաստում:

Տրանսգենդեր անձանց նկատմամբ ատելության կոչերը և բռնության դեպքերը շարունակաբար իրավապահ համակարգի կողմից չեն սատնում պատշաճ արձագանք, ինչը արդեն իսկ հանգեցրել է անպատժելիության մթնոլորտի ձևավորմանը. ընդամենը 10 օր առաջ տրանս անձանց ծեծի ենթարկելու նոր դեպք էր գրանցվել :

Կրկին կոչ ենք անում՝

- ՀՀ ոստիկանությանը, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին և պատկան մարմիններին ապահովել Տրանս ԼԳԲԻՔ անձանց անվտանգությունը և ՀՀ սահմանադրությամբ նրանց տրված բոլոր իրավունքները:
- Դիվանագիտական ներկայացուցիչներին, միջազգային ֆինանսավորողներին, որոնք իրենց ռեսուրսները և միջոցներն ուղղում են ՀՀ-ում արադարադատության բարելավմանը և հավասարության հաստատմանը, քայլեր ձեռնարկել կանխելու բռնությունը և խտրականությունը համայնքի անդամների նկատմամբ:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԴԻՄԱԿԱՎՈՐՎԱԾ ՏՂԱՄԱՐԴԻԿ ՀԱՐՁԱԿՎԵԼ ԵՆ ԿԱՆԱՆՑ ՎՐԱ (EPRESS.AM)

Մարտի 14-ի գիշերը Ամիրյան-Զաքյան խաչմերուկում տասից ավելի տղամարդիկ՝ դեմքերը փակած, մահակներով հարձակվել են տրանս կնոջ վրա, գցել են նրան գետնին և ծեծել՝ Epress.am-ի հետ զրույցում պատմել է իրավապաշտպան Լիլիթ Մարտիրոսյանը:

Կինը ինչ-որ պահի փախել է և թաքնվել շենքերից մեկի շքամուտքում, ավելի ուշ՝ դիմել է տարածքում ծառայություն իրականացնող պարեկներին: Մինչև նրանք հասել են դեպքի վայր, բռնարարները հասցրել են փախնել:

Մարտիրոսյանի խոսքով, բռնության ենթարկվածը դիմել է ոստիկանություն, անցել է նաև դատաբժշկական փորձաքննություն: Նա պատմել է, որ հասցրել է տեսնել բռնարարներից մի քանիսի դեմքերը:

Ավելի ուշ հայտնի է դարձել, որ նույն օրը՝ դեպքից մոտ կես ժամ անց, ենթադրաբար տղամարդկանց այս նույն խումբը հարձակվել է Երևանի քաղաքապետարանի տարածքում գտնվող մեկ այլ տրանս կնոջ վրա: Կնոջը ծեծի են ենթարկել և դիմել փախուստի:

Տուժողը մոտեցել է տարածքում գտնվող ոստիկաններին, նրանք շտապ օգնության մեքենա են կանչել:

«Վերջին ժամանակներում տրանս անձանց ծեծի ենթարկելու մի շարք դեպքեր են գրանցվել: Մենք կարծում ենք, որ սա կարող է ուղղորդված, գուցե նաև կազմակերպված բնույթ կրել: Միաժամանակ 10-ից ավելի դիմակավորված մարդիկ են եղել՝ ձեռքներին մահակներ, հարձակվել են երկու տրանս կնոջ վրա՝ տարբեր վայրերում, տարբեր ժամերի:

Երկու այլ տրանս կանայք՝ նախքան էս բռնությունները, Մաշտոցի պողոտայով քայլելիս են եղել, էտ տղաները վերևից եկել՝ բանդանաները դեմքներին կապած, ասել են՝ «արա, ոնց որ տրանսներ են, եկեք գնանք հետևներից»: Տրանս կանայք հասցրել են ՍԱՍ սուպերմարկետում թաքնվել: Էտ տղաները հետո իջել են Ամիրյանով դեպի Զաքյան, որտեղ և ծեծել են առաջին տրանս կնոջը…», – Epress.am-ին պատմել է իրավապաշտպանը:

Ովքե՞ր կարող էին լինել այս մարդիկ՝ ոչ նա, ոչ էլ տուժածները չգիտեն: Մի քանի հոգու դեմքը տեսել են, բայց չեն ճանաչել:

Լիլիթ Մարտիրոսյանի ղեկավարած «Right Side» կազմակերպության իրավաբանները զբաղվում են այս գործով. բռնության ենթարկված կանայք իրավապաշտպաններին երեկ են դիմել, այսօր դեպքի առթիվ նամակներ են ուղարկվել ոստիկանությանը, դատախազությանը, Քննչական Կոմիտեին և ՄԻՊ-ին: Իրավապահներից դեռ արձագանք չկա:



ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ Է 2023Թ.-Ի ԶԵԿՈՒՅՑԸ՝ ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ

Ժողովրդավարության Եվրոպական Հիմնադրամը հրապարակել է իր տարեկան զեկույցը, որտեղ ընդգծում է, թե ինչ գործողություններ են կատարվել ժողովրդավարության պաշտպանության համար Եվրոպայի հարևան տարածաշրջաններում և դրանից դուրս: Ժողովրդավարության Եվրոպական Հիմնադրամը նշում է, որ 2022 թվականը, անկասկած, ամենադժվար տարին էր 2013 թվականին կազմակերպության հիմնադրումից ի վեր՝ պայմանավորված Ռուսաստանի կողմից Ուկրաինա լայնամասշտաբ ներխուժմամբ: Զեկույցի «Շրջանավարտների պատմություններ» բաժնում Հայաստանից ներկայացված է Իրավունքի Կողմ ՀԿ-ն՝ որպես տրանսգենդեր համայնքի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություն:

Ժողովրդավարության Եվրոպական Հիմնադրամը մեկնարկային ֆինանսավորում է տրամադրել Իրավունքի Կողմ ՀԿ-ին 2017 թվականից՝ օգնելու կազմակերպությանը սկսել Հայաստանում տրանսգենդեր համայնքի առջև ծառացած խնդիրների շուրջ իրազեկման աշխատանքներ իրականացնելուն և իրավունքների պաշտպանությանը: Այսօր Իրավունքի Կողմը Հայաստանում նշանակալից դեր ունի ոլորտում: Այն օգնել է դժվարությունների մեջ գտնվող հարյուրավոր տրանսգենդեր անձանց, օժանդակել անվանափոխության հարցում, տրամադրել իրավաբանական ծառայություններ՝ խտրականության, ատելության խոսքի և հանցագործությունների դեմ պայքարելու համար: Կազմակերպության թիմը շահառուներին ուղեկցում է դատարաններ և ոստիկանական բաժանմունքներ և տեղեկություններ է հավաքում մարդու իրավունքների խախտումների մասին: ՀԿ-ն սերտորեն համագործակցում է շահառուների ընտանիքի անդամների հետ՝ աջակցելու տրանսգենդեր անձանց հարաբերություններ կառուցելու և սոցիալական կյանքում ներգրավվելու համար: Իրավունքի Կողմ ՀԿ-ի կենտրոնը հանդիսանում է ապահով տարածք, որտեղ համայնքի անդամները կարող են հանդիպել, մասնակցել տարատեսակ դասընթացների և ստանալ աջակցություն իրենց շահերի պաշտպանության համար: Զեկույցում անդրադարձ է կատարվել նաև Իրավունքի Կողմ ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանին, նշելով, որ նա միջազգային ճանաչում է ձեռք բերել 2019 թվականին՝ որպես առաջին տրանս անձը, ով ելույթ է ունեցել Հայաստանի Ազգային Ժողովի ամբիոնից՝ դատապարտելով տրանսգենդեր անձանց նկատմամբ խտրականությունը ու բռնությունը խորհրդարանի Մարդու իրավունքների հանձնաժողովի նիստի ընթացքում:

Ժողովրդավարության Եվրոպական Հիմնադրամը նշում է, որ Իրավունքի Կողմ ՀԿ-ի աշխատանքը Հայաստանում առանցքային նշանակություն ունի, քանի որ ԼԳԲՏՔԻ+ համայնքը շարունակում է բախվել ոտնձգությունների, խտրականության և բռնության:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

www.RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

facebook.com/RightSideNGO/

twitter.com/RightSideNGO

instagram.com/RightSideNGO/

+374 - 11 - 880 - 770

©Copyright All Rights Reserved For Right Side Ngo.